

ՅՐՈՇԱԿ

, , ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ⁶⁶ ՕՐԳԱՆ

ՎՃՐՈՂԸ ԿՐԻՒՆ Է

Տաճկահայաստանում տեղի ունեցած սարսափելի կոտորածից յետոյ, սուլթանի կառավարութիւնը պէտք էր ամենայն իրաւամբ յուսար, որ եթէ յեղափոխական շարժումը չմեռցրեց, գոնէ նրան խեղդեց։ Բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ թշւառականը սխալեց իւր հաշիւների մէջ, յեղափոխական շարժումը շարունակւում է իւր նախկին ուժով՝ նա մի բոպէ կանգ չէ առել։ Եւ ի՞նչպէս կարող էր կանգ առնել, չէ՞ որ դրանումէ կայանում ամբողջ տաճկահայ ժողովրդի գոյութիւնը, չէ՞ որ դա է վճռելու նրա ձակասագիրը։ Յեղափոխական շարժումի, ներկայ կուի ելքից է կախւած հայ ժողովրդի ապագան. այս մենք մի քանի անգամ ենք ասել Եւ այսպէս լինելուց յետոյ, մի յեղափոխական կազմակերպութիւն, յեղափոխական մի կուսակցութիւն, որը գոյութեան իրաւունք է ստացել՝ որովհետեւ յեղափոխական մարմին է, որը մինչև կոտորածը իւր գործունէութեամբ՝ թէ ներքին նահանգներում և թէ մայրաքաղաքում ցոյց է տւել իւր ոյժը ու կուելու ընդունակութիւնը, որ գործում է յանուն ժողովրդի և միշտ նրա հետ է, ի՞նչպէս կարող էր աղէտի ժամանակ դադարել ձեռնպահ մնալ։

Այս ժամանակի երբ սարսափը տարածւել էր ամեն կողմի երբ ժողովուրդը ահաբեկւած յուսահատւել էր, հենց այդ ժամանակ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իւր հայդուկային խմբերով ու ահաբեկիչներով երկրի զանազան կետերում թշնամու դէմ կուում, ժողովուրդը պաշտպանում էր։ Այս, միշտ է, որ մերը, ինչպէս ասել ենք, թշնամու արածի հետ չնչին է։ Բայց ովկ է մեղաւորը, ովկ է մեղաւորը, որ մենք անկարող եղանք պահանջի համեմատ օգնութեան համեմ Մեղաւորը նա է, որ մեզ եռանդուն կերպով, մեծ շրջանով չաջակցեց, ոյժ չտւաւ, որպէս զի Դաշնակցութիւնը իւր գործունէութեանը աւելի լայն ծաւալ տար, որպէս զի նա կարողանար զինել ժողովրդին և ամեն կետերի վրայ

հայդուկային խմբեր հանէր, որ ներկայումս պաշտպանելու ու կուելու գլխաւոր միջոցն է, ինչպէս և տէրորը Եւ ովկ է նա, ովկ է այդ յանցաւորը։ Տաճկահայաստանից գուրս ապրող հայ ժողովուրդը, որը իւր յսուը գրել էր դիպլոմատիայի վրայ և խորդ ու անհաւասարիմ աչքով էր նայում իւր յեղափոխական զաւակներին և նրանց արած կոչին արձագանք չէր տալիս։

Եթէ յեղափոխականները ունենային պահանջւած միջոցը, մենք գրական է ս կարող ենք ասել, որ այդ սարսափները երբէք չէին կարող այդ ծաւալին համեմ և այս ոչ թէ խօսեր են, այլ փաստեր։ Որտեղ որ եղել է հայդուկային խոսմբ, որտեղ որ Դաշնակցութիւնը կարողացել է զէնք հասցնել, այնտեղի ժողովուրդը կամ ազատ է մնացել կամ թէ չէ շատ չնչին վես և կրել։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը այս տագնապալից վիճակին շարունակում է իւր կոփել և այդ կոփւն է, կը կնում ենք, մեր ձակատագիրը վճռողը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, առանց փոշի բարձրացնելու օդի մէջ, իւր հայդուկային խմբերով թշնամուն դիմադրում և հարւածում է։ Չնայած այն անպաստ պայմաններին, որոնց մէջ գտնւում են հայ ժողովրդի այդ անձնազոհ զաւակները, նրանք ոչ միայն քայլութեամբ կուում են թշնամու դէմ, այլ մինչև իսկ յաղթութիւններ են տանում իրենց դէմ գորս եկող մեծաքանակ զօրքի ու համբդիկանների դէմ։ և նրանք այսպիսի յաղթութիւններ են տարել—Քէմախում, սահմանագլխներում, Զուխուրում, Քեօբրի-Քէօյում, Զեօլ-Զիմանում, Բաբերդում, Մամանդալանայում և Դէլի-Պապյում։

Իսկ Վասպուրականի մեր հայդուկային խմբի հերոսական նոր կոփւը ոչ միայն խրախուսել ոգեսորել ու սիրտ է տւել ժողովրդին, այլև ընդհանուր սարսափ է տարածել քիւրդ ու տաճիկ ժողովրդի վրայ։ Եւ այսօր այդ ժողովուրդը, հային կոտորողը, երգեր է կապում ու երգում հայդուկի, անձնազոհի քաջագործութիւնները։ Հայդուկը ու ահաբեկիչն է հայ ժողովրդի պաշտպանը, դրանք են թշնամու դէմ կուողը ու նրան սարսափեցնողը։ Բայց այս գործունէութիւնը պիտի հասցնել իւր ցանկալի ծաւալին, նրան պիտի ոյժ ու

զօրութիւն տալ իսկ դրան համելու համար Դաշնակցութիւնը կարեք ունի ժողովրդի աջակցութեան ու օգնութեան, ուստի նա նորից կոչ է անում: Անցեալի դառն փորձերից պիտի օգտւել բաւական է վերջապէս այդ աստիճանի սառն ու անտարբեր լինել դէպի մեր թշւառ եղայրներն ու քոյրերը, դէպի հարկւր հազար զոհերը, դէպի աւերակ դարձած հայրենիքը. ամօթ է:

Ներկայ ճգնաժամը պահանջում է ամենալայն ու եռանդուն յեղափոխական շարժումներ, կատաղի կոիւ և պէտք է գործ դնել ամեն միջոց յաղթութիւնը տանելու: Պէտք է մեր գործունենութեան բոլոր ոյժը կենտրոնացնենք ներկայ կուփ վրայ և թշնամուն հարւածներ տալով, մեռցնենք նրան—այդ մահն է մեզ փըրկութիւն բերողը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մինչև իւր վերջին վայրկեանը կը կուփ և յամառութեամբ առաջ կը տանի ներկայ հայդուկային ու տէրրօրիստական գործողութիւնները:

Եւ այսօր, այս ծանր ու դժւար վայրկեանին մենք դարձեալ հրաւեր ենք կարդում հայ ժողովրդին օգնել ոյժ տալ Դաշնակցութեան յաղողութեամբ մինչուն ներկայ կոիւը՝ յաղթութիւնը տանելու, որից կախւած է տաճկահայի և գուցէ հայութեան ճակատագիրը...

Ճաշառք

Զ Ե Յ Թ Ո Խ Ն Ի Ա Պ Ս Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Լ

Ն Ա Մ Ա Կ . . .

Աը ցաւիմ, որ Ուշիոյ մասին առնւած տեղեկութիւնները քիչ իսկ տարածայնութիւնները խիստ շատ են: Կիբեկոյ զանազան կողմերէ եկող նամակներ և պատհական ճամբորգներ իրարու հակասական շատ մը բաներ կը պատմն, որոցմէ շատեր բնականաբար կարեւորութենէ զուրկ են:

Ուշիոյ ներկայ վիճակի մասին կատարեալ ու ճըշգրիտ տեղեկութիւններ ստանալու համար սուրհանդակներ հանւած էին: Ասոնցմէ ոմանք դեռ իրենց նլպատակակետին չհասած, ձերբակալւած ու յօշուած են, ոմանց վերաբերմամբ ալ դեռ տեղեկութիւն չկայ, իսկ մէկալները սոսկալի նեղութիւններ քաշելէն յետոյ, վերջապէս յաջողած են լուր մը բերել Զէյթունէն, բայց դժբախտաբար բերած լուրերնին շատ հին է և Զէյթունի այժմեան վիճակի մասին տեղեկութիւն մը չեն կրնար տալ: Անկից յետոյ, ուղղակի Զէյթունէն նորագոյն լուր մը չկայ: Թշնամին պաշարումը այն աստիճան յառաջ տարած է, որ գրեթէ ճանձ անգամ չթողուր գրաւէն ներս կամ ներսէն գուրս, բայց և այնպէս հարկ կը համարիմ: Հաջորդել առած տեղեկութիւնները:

Սայ լուրին նայելով, Զէյթունի վիճակը մինչև նո-

յեմեր ամսոյ վերջերն շատ գոհացուցիչ է: յաջողութիւնը գրեթէ կատարեալ: Ուշիոյ և Գոնորզի մէջ դանուող ժողովրդեան թիւը մինչև 40,000-ի հասեր է, ասոնցմէ 15,000-ի շափ իրեր զինւոր զինեալ: իսկ մացեալը՝ կիս, երեխայ, ծերեր և անկարողներ (հիւանդ և այլն). 4000-ը միայն մարթին ունին, իսկ մացեալները տեղական պարզ հրացաններ: Չնայելով իրենց այս քիչորութեանը և տկար լինելուն, քանիցս մէկ երկու հարիւր հոգով իրենց հնգապատիկ կամ տասնապատիկ թով թշնամեաց հետ զարնւեր և յաջողութիւնը վասակեր են: "Եթէ մինչև մէկ ամիս, կը յաւլուն զէյթունցիք, օգնութիւն չլինի կամ եւրոպական միջամտութիւն մը տեղի չունենայ, Զէյթունը ալ բնաջինը կը լինի: Բայց ինչ որ ալ լինի, կըսեն զէյթունցիք, մենք ուկտած ենք մինչև մեր վերջին շունչը, մինչև մեր արեան վերջին կաթիւը կուել մեր հայրենեաց ազատութեան համար և երբէք անձնատուր չլինել": Եւ այդ օրէն մինչև այսօր 40 օրեր անցած են և օգնութիւն կամ միջամտութիւն մը չէ եղած տակաւին. արդեօք ի՞նչ եղած են այդ քաջերը, չգիտենիք...

Վերջին պահուն հետեւեալ տեղեկութիւնները առի, որ կը փութամ հաղորդել:

Ուշիան աղէկ կազմակերպեալ կամ զինեալ է: Կառավարական պաշտօնէկ մառնւած ստոյգ տեղեկութիւններուն նայելով, բանակին հրաման տրւած է յարձակում չգործել ընդդէմ Ուշիոյ, այլ միայն պաշարման վիճակը շարունակել: Իսկ զինւորի մալ նամակէն հասկցւած է, թէ թուրք բանակը կը տառապի ցրտէն, անօթութենէն և զգեստի պակասութենէն ու ասոնցմէ առաջ եկող հիւանդութենէն, թէ մինչև հիմա ոչինչ չեն կարողացած ընել և ընելու ալ յոյս չունին:

Ուշեցիք Մարաշի կոտորածէն խիստ գրգռւած՝ կուղեն 2000 հոգով դիմել հոն, վեճք լուծելու համար: Անկարելի է, որ ուշեցիք անձնատուր լինին. թուրքերը իրենց վրայ չյարձակած, իրենք անոնց վրայ յարձակել ուզեր է և դիմեր է հոն, բայց անմարդաբնակ գտնելով այդ վայրերը, սկսեր է կրակի տալ գիշացցոց աները, որովհետև բնակիչները առաջուց իրազեկ լինելով՝ ապաստանած էին Զէյթուն: Թուրք զօրքերը տեսնելով Զէյթունի ապաստանութ և անել ճամբաները, ցուրտան ու ճմեռը, շատերը սկսած են փախչել: Զօրքերը ու զօրապիտներ յուսահատած են: Զէյթունցիք բոլոր կիրճերը ամրացուցած են, անկարելի է ներս մտնել:

Մենք, հայերս այն ժամանակ միայն բժշկին կը դիմենք, երբ հիւանդը գերեզմանի վհին կը մօտենայ...

Ամեն տեղէ օգնութիւն, օգնութիւն կը պուան ամեն տեսակետով՝ գրամ, պաշար, ուազմամթերք, մարդ և այլն, և եթէ շուտափոյթ օգնութիւններ չհասնին, Զէյթունն ևս կորած է:

* *

Հոս փոքրիկ ուրախառիթ լուր մը.—Ռւշիոյ շօջակաները քանի մը աղի աղբի գունը գտնւած են, որով աղի պակասութեան համար այլևս շատ չպիտի նեղուն, բայց պաշարի պակասութիւնը խիստ զգալի է. այժմեան կերածնին մեծ մասամբ միս և խոտ է:

* *

ԵԽՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

31-ին յուն. Վիէննա Պոլսից ստացած հեռագիրները հազորում են, որ հիւպատոսները հասել են Զէյթուն և գտել են, որ դրութիւնը խիստ լուրջ է: Ժանտատենդ (typhus) և լնդագարութիւն (scorbut) հիւպատութիւնները օրական միջին թւով 40 զոհ են տանում:

Տաճկական զօրքի առողջապահական դրութիւնը աւելի պակաս ողբալի է, թէև նա ել տանջւում է թանշեց (dysenterie): Ապստամբների մի փորձը՝ բացանել մի ճամբար, անյաջողութեան է հանդիպել: Հիւպատոսները սկսել են իրենց բանակցութիւնները, որ ապրուտամբները անձնատուր լինեն: Առ այժմ բաւականաչափ փախստականներ, որոնց մէջ և չորս քահանայ, ուղարկւած են Մարաշ,

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

III

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՅԴԻԿԱՑԻՆ ԽՄԲԻ ԿՐԻՒՀ

(ՊԱՏՄԱԾ ՕՏԱՐՆԵՐԻՑ)

Խումբը մուտք գործեց Վասպուրական հոկտ. 23-ին, Պոլսոյ, Տրապիզոնի, Բաբերդի, Բիթլիզի, Կարսոյ աղետալի գեպերից յետոյ, երբ վտանգ էր սպառնում և Վասպուրականին: Նա բաղկացած էր 60 հոգուց, որոնց մէջ կային և 16 արմենականներ: Հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատւել է. պարսիկներին մինչև իսկ արդեւած է անց ու դրոձը: Երկու շաբաթ սրանից առաջ պէտք էր վերադառնար Վան գնացող կարաւանը, սակայն գեռ ևս նա չկայ՝ տաճիկ կառավարութեան կողմից յարուցած արգելքների պատճառաւ: Կցիտուր տեղեկութիւններ են դալիս զանազան աղբիւներից բղխած: Արդէն շատ տեղ առասպելական լուրեր են տարածւել իր երկու հազար զինւած ձիաւոր հայեր արշաւանք են գործել Վասպուրական, կոտորել են ճանապարհին հանդիպող քրդերին և տաճիկ զօրքերին ու յաջողութեամբ հասել են Վան:

Վերջին գեպերի ժամանակ պարսկաստանցի հայդարանցիք անցել էին Վասպուրական, միացել իրենց ցեղակցների հետ, թալանել ամբողջ Արաղյախի դաշտը և շրջակայ գաւառները ու ահագին աւարով Պարսկաստան վերադարձել էինց այս հայդարանցի ցեղն է ընդհարում ունեցել մեր խմբի հետ: Եւարի հետ բերել են խմբին պատկանող երեք նոր ձեւի հրացան:

Առաջ ենք բերում երկու անձանց պատմածները: *)

1. Պարսիկ խանի պատմածը.

“Խումբը անցնում է Սարա կոչւած գիւղապաղաքի մօտով և կանգ է առնում հանգստանալու: Քիւրդ հովիւներից մէկը նկատում է հեռակ ձորի մէջ գտնող մարդկանց և յայտնում է մօտակայ քիւրդ ցեղապետներին: Ցեղապետները ստուգելով եղելութիւնը, շուտով ահագին բազմութեամբ գալիս շրջապատում են խըմբի մարդկանց, բայց սրանք չնորհիւ իրենց շատ հեռու արձակող հրացաններին, թոյլ չեն տալիս իրենց մօտենալ և սպանելով 5 հոգի ու վիրաւորելով 10-ից աւելի մարդ՝ պատում են թշնամու շղթան և աներեւոյթանում: Հայերը ոչ մի մարդ չեն կորցնում, միայն թողնում են ձորի մէջ մի քանի հրացաններ ***): Խմբի հետքը շուտով գտնւում է Քօղազքեասան գիւղում:

Այդ բանը յայտնում է մի բօղազքեասանցի հայ: Երբ քրդերը մօտենում են գիւղին, խմբի մի մասին յաջողուում է անցնել լեռները և ամուր գիւղը բռնել իսկ միւս մասը ուշանում է և մնում գիւղի մէջ: Քըրդերը պաշարում են գիւղի մէջ գտնւածներին: Երկար ժամանակ տեսում: Է հրացանագութիւնը եղել կողմից էլ Քրդերից շատերը ընկնում են, իսկ հայերից ոչ ոք: Բայց մի ժամանակ խմբի կողմից հրացանագութիւնն սկսում է հետզհետէ մեղմանալ և յետոյ բոլորին դադարում է: Դա նշան է եղել որ հայերի փամփուշտները հատել են, քրդերը համարձակութիւն են ստանում և անընդհատ հրացան արձակերով, հետզհետէ մօտենում են: Հայերը չեն պատասխանում: Քրդերը մինչեւ իսկ գոզում են անձնատուր լինելու մասին, խոստանալով խնայել այդպիսի կարիչների կեանքքի: Բայց յանկարծ միանգամից խմբի հրացանագութիւնը որոտում են և հենց առաջին անգամից 20-ից աւել քրդեր գետին են գլորուում: Քրդերը բռլորովին շփոթում են այդ անսպասելի ելքից և սկսում են փախչել դէպի իրեց նախկին գիւղը: Անընդհատ գնդակներ տեղացներով սարսափահար քրդերի գլխին, խումբը այլևս ժամանակ չի տալիս նրանց ուշքի գալու և կոտորելով ճանապարհ է բաց անում, անցնում լեռները ու աներեւոյթանում: Այդ ժամանակ հայերից ընկնում են 5 հոգի: Քրդերի կորուստը հարիւրից անցնում է: Քըրդերն իրենց վրէժը լուծում են անզեն գիւղացներից”:


2. Քրդի պատմածը Զոհրավյառում:

“Մենք, 2000 հոգի էինք. ամբողջ հայդարանցի ցեղը ուսի էր կանգնել Քէդերիներին (անձնազոհերին) մենք պատահեցնել լեռներում: Նրանք 70 հոգուց աւել էին: Հալածելով դրանց, մեզ յաջողւեց իշեցնել լեռներից և ձգել բաց դաշտի մէջ: Այստեղ միայն մենք

*) Խակապէս խումբը իւր հետո ունի աւելորդ հրացաններ:

**) Դրանցից մէկը քիւրդ է և պատկանում է հայդարանցի ցեղին, որի մի փոքր մասը բնակւում է Պարսկաստանում; սրա ցեղապետն է Դահար խանը, իսկ երկրորդը սահմանազլիւում զուտող մի պարսկական է Խաչար խանը:

սկսեցինք մեր կոիւը: Մենք կարծում ենք, թէ նրանք այժմ մեր ձեռքուն են, թէ նրանց դրութիւնը յուահատական է, որովհետև փախչելու ոչ մի հնար չունեին: Բայց որքան եղաւ մեր քարմանքը, երբ այդ ֆերայիներից շատերը մեր գնդակներ արձակելու ժամանակ, ամենայն սառնասրտութեամբ ու հանդստութեամբ հանեցին իրենց թաշկինակները և սկսեցին պարել ու լոր պարեր: Ծեմանելով այդ արհամարհանքը դեպի մեր գնդակները, մենք ակամայ դադարեցրինք մեր հրացանաձգութիւնը և ապշած նայում ենք այդ արօրինակ մարդկանց խմբի վրայ: Իրաւոնք էլ ունեին, որովհետեւ մեր գնդակները նրանց չեն համնում. մինչդեռ երբ մեջանից մեկը գլուխ էր բարձրացնում քարի տակից աւելի մօտենալու նպատակով, նա իսկոյն գնդակահար գլորւում էր: Կորցնելով այսպիսով 12 մարդ, մենք այլևս չենք համարձակուում տեղից շարժել այլ հրացան ենք արձակում քարերի ետեր պատսպարած: Այդ ժամանակ նրանցից մեկն ընկաւ, իսկ միւսները հեռացան: Աւախսանալով մեր յաջողութեան վրայ, մերոնցից շատերն իսկոյն դուրս եկան քարերի տակից, որպէս զի գնան և սպանածի հրացանը յափշտակեն: Բայց մի քիչ առաջ գնացին թէ չէ, ֆեղայիները նորից վերադարձան և անսպասելի կերպով յարձակում գործեցին մեղ վրայ: Մերոնցից երեքը տեղի ու տեղը մնացին, իսկ միւսները փախան և դարձեալ քարերի ետեր մտան: Իսկ սպանած հայր հանդարդութեամբ վեր կացաւ, առաւ իր հրացանը և միացաւ իր ընկերներին: Պարզ եղաւ, որ նրանք կեղծել են, ընկածին ամենայն գնդակ չեր դիպել. նրանց նպատակն է եղել միայն մեղ դուրս բերել մեր թագստոցներից:



Քաբերդի Դաշնակցութեան հայրուկային խումբը նզնպէս ընդհարում է ունեցել թշնամու հետ, բայց ընդհարման նիստագրութիւնը մեր ձեռքը չէ հասել, թէ ուղարկած է եղել:

Վ Ա Տ Ա Ր Ա Ծ Մ Ն Ե Ր

Ե Բ Զ Ն Կ Ա

II

Այս աննկարագրելի խժգութիւններէն յետոյ Զեքի շունը քանի մը անդամ կը կանչէ հայ քահանաները, երեւելիները և անոնցմէ զէնք կը պահանջէ: Յեղափոխականները ընդդիմացան այս լիրա որոշման Զեքին կատղած, ու եթէ չըյանձնէք, կըսէ, թնդանօժները շունք եմ հայոց թաղերուն վրայ (իրաւ ալ շիտկած եր), ժողովուրդն ալ կը յարձըկի հայերուն վրայ, այն ատեն ես չեմ կրնար առաջն առնել: Այս սպառնալիքն վերջ անմիջապէս կը բանտարկէ աղաներէն մէկ քանին, միւսներն ալ քահանայից հետ հայ տները կերպան՝ աղանդով, պաղատելով քանի մը զէնքեր

կը հաւաքեն. անոնք որ չունեին, տաճիկներէ սուլ ու կրակ 1 լիրա ատրճանակը 5 լիրայի գնելով՝ 270 կը տոր զէնք կը յանձնեն: Զեքին ասով ալ գոհ չըմալով, սկսաւ ինք տուները խուզարկել, յետոյ բոնի շնորհակալութեան գիր ուղեց, ատ ալ տւին: Ապա յեղափոխականները և դիմամիտ պահանջեց: Հիմա միայն չորինիս մնաց, անոր ալ կարգը կուգայ:

Քեռիին մայրը երկուս ու կէս ամիս է բանտն է. այժմ հետամուտ են քրոջը, Զարուհին ձեռք ձգել: Մենք հիմա պարզ կեանքի մժնոլորդէն դուրս կապրինք. ալ համոզւած ենք, թէ այս աշխարհը մեզի համար չէ. շզմնիկ հաւերու պէս ման կուգանք անպատակ, ով գիտէ քանի մը ժամէն, կամ քանի մը օրէն մենք ալ կը մարինք. այն ատեն հրէշը թող իր պոզ ազատ շարժէ: իր բերանը հովին բացած:— Դէպքին օրը՝ քանի մը զօրականներ իրենց առջև պարզուած ալմարդկային տեսարանէն խղճահար, կըսեն իրարու մենք Ասունի կոտորածը տեսանք, հիմա ալ ատեսանք, եթէ այս ըրածնիս մեզի մնայ, այն ատեն պիտի համարձակիմ ըսելու, թէ Աստւած չիկայ: Զինորներէն շատերը լացած են:

Եթէ պատիկ միսիթարութիւն մը ունինք, աս է, որ թուրքերը սարսափ կզգան Քեռիին անունէն: Հաւատացած են, որ անիկա Դայասայի կողմը անցեր և 600 մարդով պիտի գայ քաղաքը կոկէ: Ագոր համար հազարաւոր զօրք լցուցած են Զարդախիի և Կերձնիսի կողմերը, որպէս զի գեպի քաղաք արշաւանքը կասեցնեն: Թուրքերը իրենց պատուհաններու առջև վախերնուն քարեր շարեր են. անոնք մեզմէ կը վախնան, մենք ալ իրենցտ:

Գալով գիւղացիների վիճակին, մարդկային լեզով պատմել անկարելի է այդ թշւառներուն կացութիւնը Կարծեմ թէ ոչ մէկ գիւղ ողջ մնաց և փախչովներն ալ մատով կը համրւին: Ոչ երեխալի, ոչ օրիորդի, ոչ ծերի խնայած են. մարդկային գազանութիւնը աշխարհի պատմութեան գոյն ուրեք այնքան խղճմարէն կատարած է իր գերը: Մենք մեր երդիքներու կրայէն հանդիսատես եղանք Բաղէշու հորիզոնին շուրջը բարձրացած դժոխային բոցերուն ու սև մուխերուն, ուր մեր եղբայրները օգնութիւն կաղաղակէին: Ափսոս, մենք լալ միայն կարող ենք, երբ մեր սրտակիցները կեանքի աղէսարը պայքարը կը մղէին: Այն վայրերը, որ երրեն բազմաթիւ փոքրիկ գիւղեր կը շէնցնէին, այսօր մինիրի անսպատներ դարձած են, զուրկ ու է կենդանութենէ. Քիչ վերջը հիստային քամին ալ պիտի գայ, պիտի ժողովէ տարաբախտ: Հայ զաւակներուն կեանքի մրուրը և պիտի նետէ զայն քաղաքակիրթ աշխարհ անամօթ ձակտին:

Փախչողները կը պատմեն՝ թէ բոլոր ճամբաները դիսակ կարած են. բարբարոսութիւնը ուր որ հասդիպած է հայու մը՝ անգթաբար խողխողած է տեղին ու տեղը:

Դեռ աւերումները կը շարունակէին: Հետևեալ գիւղերը և վանքերը բոլորովին կործանած և անհետեղած են՝ Մթնունի 50 տուն, Կարմրի 50 տուն, Փալանզան 20 տուն, Սրբերան 30 տուն: Հայրապետի 30 տուն, Բղվան 80 տուն, Կիլիկա 80 տուն, Մահմետացիր 100 տուն, Ղարաթուշ 30 տուն, Մեղուցիք 100 տուն, Մակար 50 տուն, Ագրակ 80 տուն, Հրուման 30 տ., Մոլլագեղ 30 տուն, Երկան 100 տուն, Գէօլիցիք 45 տուն,

ծեծւած, վիրաւորւած են: Կը բողոքեն, բայց կառավարութիւնը կարեսութիւն անդամ չտար: “Նէվէհիցի մի յոյն՝ կսպանւի Գըշէհը Սավճը գիւղին մէջ, նոյն գեղի թուրքերէն: Նորա երկու ընկերները ևս կը մարթեն ուրիշ գիւղի մէջ: Եօզզաթցի 2օլագեան Սենեքերիմ անուն, 25 տարւան երիտասարդ մը՝ Գանթարձը կարապետ անուն ընկերոջը հետ՝ Մէծիտիէ նահանգին մի գիւղին մէջ կը կողոպտւին. իրենց քով գտնւած 600 դահեկան դրամը առնելէ վերջ Սենեքերիմը կը մորթեն անդթօրէն, իսկ կառապետը վիրաւոր կը ձգեն: Աւելրդ է ըսել, թէ դիմումներ միշտ կը լսան տեղական կառավարութեան, բայց անօգուտ, ականջները խըլացած են:

ՄՈՒԶԻԱՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՔԸ

1895 թ. նոյեմ. 3-ին տեղւոյս թուրք խուժանը, ուրբաթի աղօթքը կատարածնուն պէս՝ իսկոյն յարձակեցան շուկային վրայ: Հայերէն ոմանք արդէն նախազգացած լինելով այս չարադէպ վտանգը՝ խանութնին չէին բացած այն օր, իսկ ոմանք միամիտը՝ կարեսութիւն չտարով և կամ նոյն իսկ կառավարութեան սուսապաշտիքը քաջալերութենէն խարեւլով՝ խանութները բացած, էին: Չմոռնանք ըսելու, որ այս յարձակումը պատերազմահրաւեր փողով սկսաւ, այն է կառավարական մասնաւոր հրամանով: Բաց խանութները կողոպտեցին ամբողջապէս և նոցա տէրերը սրէ անցուցին անողորմաբար: Նոյնպէս հրապարակի վրայ գտնւող բոլոր հայերը ջարդեցին, ժամերով աշխատեցան դոց խանութներն և վաճառատուները բանալ դռները կոտրելով. ուր որ մտան ասեղ մը իսկ չի ձգեցին: Տուներու վրայ արշաւելու չհամարձակեցան, ուստի իրենց տուներուն մէջ ապաստանած և պատրաստ եղողները ազատ մնացին այս կոտորածէն: Կիւժական վնասնի 100,000 ոսկիէ աւելի է. մէջ վաճառատանց տոմարները ևս ջնեցին ու այրեցին: Սոսկ մի անհատ ուժ հազար ոսկեց չափ լինաւ ունի:

Յոյն խանութներու ընթառեցին: Թէկ հայոց թաղերու վրայ ընհամարձակեցան արշաւել բայց 12 ընտանիք՝ որոց տուները քաջարին եղըը և թրքաց մօտ էին, զոհ գացին ամբողջապէս: Զոհերու թիւը երկու հարիւրէ աւելի է: Երեք հարիւրի չափ ալկոուսածներ ունինք, զորս չգիտենք, թէ ի՞նչ եղան. անյայտ են: Ուրիշ տեղերու բաղդատմամբ թէկ բազմաթիւ չեն քաջարին սպանւածները, սակայն ժողովուրդը յետին աղքատութեան մատնւեցաւ: Չմոռը վրայ հասաւ՝ հաց, զգեստ կողենքն քաջարէն ու ցրտէն ընթեռնելու համար:

Մարզւանի շըշակայ գիւղերը ևս կողոպտւած են: Համբ գիւղի խանութները, վաճառատունք ևայլն, բոլորը մաքրեցան: Անձի կորուստ չեղաւ: Կավզայի մէջ 11 տուն ամբողջ սրէ անցուցին և ինչքերնին յափըշտակեցին:

Ա. Մ Ա Ս Ի Ա Ա

Առաջները, Ամասիոյ մէջ ևս շարժում տեղի ունենալով՝ հայոց խանութներէն յաս մը յափշտակւած և 17-20-ի չափ անձանց կորուստ եղած էր, լսեցինք թէ այս օրերուս երկրորդ և ահագին իրարանցում մը եղած է. սակայն դեռ որոշ և ստոյդ տեղեկութիւնք ըստացանք:

* * *

Ասոնք զանազան վայրերէ հասած ընդարձակ տեղեկագրերու համառօտ բովանդակութիւնն են, զորս կը ներյացնենք: Ասոնք սուլմանի բարենորոգութիւններն են՝ զորս անյապաղ կատարել սկսաւ ծրագրին ընդունւած և ստորագրութեած օրէն ու ժամէն: Ա՛հ, հուր լափեց Հայաստանը, խողխողեցաւ հայուն հայրենիքը արեան ծովեր ձեացան և յորդեցան ամենուրեք: Թողարկութեան եւրոպան, հայու խպառ բնաջնջ ըլլալը բըռնաւորութեան անողորմ սուրին տակ, այն դարուն մէջ, որ լուսաւոր տիտղոսը կը կրէ: Արգեօք գեւս կը կասկածին եւրոպացի տերութիւնք, թէ հրէշ սուլմանը անմեղ է, անտեղեակ է: Կիւրինի վրայ յարձակող աւրառուք արձակ, համարձակ պոռացեր են թէ՝ ոմբ թագաւորը հրամայեց մեղի սրէ անցնել բոլոր կեավուրները և յափշտակել անոնց բոլոր ինչքը: Մարզւանի մէջ մասնաւոր զինուորական մարտափողով սկսած և փողի ձայնով դադրած է աւարառութիւնը և կոտորածը, ինչպէս եօզզատի մէջ անցեալ տարի մարտահրաւեր փողով սկսաւ կոտորածը և նոյնով դադրեցաւ: Կոտորած ընելի յետոյ օրերով ալ անընդհատ սայլերով ու ջորիներով աւար կրեցին ու տարին:

Ո՞վ դրդեց այդ տիմար վայրենիները, խմբովին գործելու, ով ժամադրութիւն ըրաւ այդ խառն ի խուռան ցեղերը միենոյն օրը և միենոյն ժամը ի մի հաւաքելու, որոնք մէկմէկու լեզուն անդամ չեն դիտեր, իրարու խօսած չեն հասկնար, զիրար չեն ճանչնար այդ քիւրդ, թուրք, չէրբէզ: Հրոսակները: Մենք լաւ և ստուգապէս դիտենք, թէ կառավարութեան ծրագրով եղած աստիք: Մենք արդէն կը ճանաչէնք սուլմանը, իր անթիւ արիւնարու պաշտօնեաներովը, մենք զինքը ճանցած էինք մեր կրած հարստահարութիւններով, մեր բազմաչարչար ժողովրդեան նահատակութիւններով, մեր հարսներու քոյլերու վրայ ի գործ դրած անխիղճ բռնաբարութիւններէն:

Եւրոպան արձան կտրեցաւ մեր արդար բողոքներուն, մեր հառաջանքներուն դիմաց, անշուշտ օր մը պիտի գայ, որ անիկա մեր գերեզմանաց, մեր աւերակներու և մեր ամիւններուն վրայ կանգնել իր բարենորդումներու կոթողը:

Ա՛լ մէնք վարժեւցանք մահւան, սիրայօժար կը մենինք: Թողարկութեան իր քար սրտովը հանգիստ մը անխճութիւնով:

Մենք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, միայն պատառ մը հաց, լսեցի կանոր մը և դլուի դնելու տեղ մը տէր թշւառ հայուն, որպէս զի քաջարէն և ցուրտէն չըկորնչի:

Հաց, զգեստ, տուն...

Ս. Մ Ս Ո Ն Ի Յ

Հայութիւնը Ձգնաժամի մէջ է: Կարծես Պոլսոյ խաղաղ ցոյցից յետոյ, որը այնքան ցաւալի վերջաւորութիւն ունեցաւ, Տրապիզոնի, Կարինի, Երջնկայի, Խնուսի, Բաբերդի և այլն տեղերու մէջ պատահած սոսկալի խժդժութիւններ բաւական չէին տառապեալ հայուն սիրու ի խոր խոցելու: Կարծես գրանք բաւական չէին քաղաքակիրթ Եւրոպայի համար իրու ամօթ ու նախատինք, նոյեմբերի 16-ին (Ն. տ.) միահամուռ հասան Ամասիայէ, Թօգաթէ, Սվազէ, Մալաթիայէ, Մարզւանէ և այլ տեղերէ կոտորածի տեղեկութիւններ, որոնց ըստուգութիւնը թէեւ մասնաւորներու եկած հեռագիրներէն հաստատւեցաւ, բայց գրանց հետևանքի մասին՝ ճամբաներու անապահութիւնից ոչ մի ճամբորդ չգալիվ, և սովորական փոստայի տասն օր ուշանալու պատճառաւ, ոչ մի մանրամասնութիւն քաղել անկարելի եղաւ: Խոկ եթէ եղան թրբական աղբիւրներէ տեղեկութիւններ, նրանց ալ ի հարկէ ներելի չէր հաւատ ընծայել, ըստ որում նրանց բերնին մէջ իրութիւնները չափազանց կը պատիկնան ու կը խեղաթիւրւեն:

Աչա երկու օր առաջ հասած նամակով ինչպէս են նըկարագրում Ամասիյ գեպքը որը տեղի է ունեցել ամսոյս 15-ին (Ն. տ.), ուրբաթ օր:

ՈԱնցեալ ուրբաթ օրէն ի վեր ամբողջ հայերս տանը մէջ ենք Դէպահին օրը, Սուլթան Պէյազիտի շրջակայէն սկսեալ, ամբողջ շուկան ակնթարթի մը մէջ գոցեցաւ, յանկարծ պայթող փոթորիկի մը սարսափելի ուժնութեամբ, գոռում գոչումով ու իրարանցումով: Խանութիւնին առանց գոցելու փախչողները բազմ մաթիւ էին: Կէս օրւայ ուրբաթի աղօթքին յաջրդող այս խառնակութիւնը հայերու հրապարակի վրայէն պակսելով, հանդարտեցաւ պահ մը, որ ատեն Թաշխանը, եկեղեցիներու ու ատոր անոր տունը ապաստանողներ միջոց ունեցան իրենց տուները դիմելու: Այս ատեն, ժամը 9-10, արդէն փողոցները ամբողջ լիցւած էին գիւղացիներու քաղցիներով բազմութեամբ, որը կատարելապէս զինւած էին բիրերով, ուկոլներով ու դանակներով: Փողոցներու մէջ յետամաց հաերէն՝ մօտ 80-100 անձի կորուստը՝ այս ժամէն վերջը պատահած է. թէեւ ստոյդ թիւը չգիտացիր: Բայցի Պէտէնտէնէն ու Թաշխանէն՝ ամբողջ հրապարակը թալանած է թուրք խուժանին կողմէ: Նիւթմականի այս փչացումը, մէզ, ապրողներուն համար թէեւ կեանքի պահպանութեան մտածումով մեղմացած, այնու հանդերձ սոսկալի է: Խեղձութիւնը վերջին, ծայրն է հասած նոյն իսկ անոնց մէջ՝ որոնք գեռ երեկ հարուստ էին ու բարեկեցիկ: Օգնութիւն որմէ սպասել: Դրացիդ, բարեկամդ, ազգականդ, նոյն իսկ ազգդ համօրէն վիճակայից է քեզի: Խանութիւններու մէջ 10 փարայի ապրանք թողւած չէ: Նամակներ, թղթեր, տումարներ ամբողջ փչացած են կամ կորսւած: Քաղաքապետ Պէքեր փաշան աղդու ջանքեր կընէ գողոնները երկան հանելու, և այդ մոօք գիւղերն ալ ոստիկաններ զըրկած է: Հաօտատ խոստում ըրած է հայուն, թէ բոլոր

կորուստները սանթիմով պիտի գտնւին կամ փոխարինեն:

Բոլորովին խեղձներուն սկսւած է ալիւր բաշխել որոնց փաշան իր կողմէ նւիրած է 60 պարկ:

Աչա այն աղէխարշ տեղեկութիւնը, որ անտարակոյս տակաւին շատ թերի է, քանի որ տեղեկատուն տանը մէջ փակած ըլլալով մանրամասնութենէն շատ բանի անտեղեակ է: Ամասիան բաղդատելով Սվազի, Կիւրինի և այլ տեղերու, տակաւին կարող է բարեբաղդ համարել իրան, քանի որ թուրք խուժանի բարբարոսութիւնը խայել է գէթ նրա ընտանեկան յարկը և այդ ոչ թէ իր խղձահարութիւնից, որովհետեւ խիզը գոյութուն չունի այդ գազանացած ժողովոդի մէջ, այլ այդ պարագայում գտնելիք զօրաւոր ընդդիմութեան երկիւղից: Խոչ որ ամենավատ ստորութիւն է թուում ինձ, դա այն խոստումն է, որ կընէ քաղաքապետ փաշան, գտնելու հայերին ամբողջ ապրանքը, այն ապրանքը զորս ինքը նոյն իսկ իր լէշակեր արիւնարբու վեհապետի հրամանով, թալանել տւեց իրանց պետի արժանի ժողովոդին: Հայը լաւ գիտէ, թէ մի ասեղ չի վերադառնալ իր յափշտակեւած ապրանքներից: Խոկ սոսկալի աներեսութիւն չէ, խեղճ ժողովոդէն իրան քրաինքի արդար վաստակը յափշտակելուց յետոյ, նրան ողորմութիւն տալու ելլելը: Ոչ հայը կրնայ քաղցած մեռնել, քան այդ հրէշների ողորմութիւնով ապրել. նահանդապետ Պէքերը լաւագոյն կանէր, եթէ այդ ալիւրը զրկէր իրանց մետրէսէները, գազան մօլաներին, հետեկով իրա սուլթանի օրինակին:

Մարզւան, Թօգաթ, Սվազ Մալաթիա, ի՞նչ թլւեմ, ամբողջ հայաբնակ քաղաքներ և նոյն իսկ աւաններ, հայերը նիւթմապետ բոլորովին փչացած կարելի է համարել Համսող փոստան ուրիշ տեղերու անձի: Կորուստի որբանութեան մասին տեղեկութիւն չըերաւ, նամակներ հին ըլլալուն պատճառաւ: Կը հաւաստեն, որ Մարզւան մեռածներու թիւը կը հաշւեն 100-150 հոգի: Ճամբանների վրայ ոչ մի ապահովութիւն չկայ: Ճամբուն երկայնքը գտնւող բոլոր հայերու ապրանքները նոյնպէս թալնւած են: Ճամբու վրայ սպանւած հայեր շատ են. երթեւեկ բոլորովին գաղրած է: Այս ամեն հետզհետէ համսող տիսուր տեղեկութիւններ՝ տեղւոյս հայ ժողովուրդը անհուն սարսափով լցուցին և հակառակ կառավարութեան ձեռք առած զգուշական խիստ միջոցներուն, այստեղ ալ յարձակում մը կրելու երկուզ պաշարած է ամեն որ:

Այս ամեն բարբարոսութիւնների հանդէս՝ Եւրոպական դիվլամատիան թող շարունակէ իր անվերջանալի բանակցութիւնը հարեմական խելայեղեղ միթնոլորդով արբեցած այդ պոռնիկ կառավարութեան հետ: Նա միշտ կարող է իր նենդամիտ հնարամտութեամբ տակաւին երկար խարել նրանց և անվորով յառաջ տանել, իր գործը՝ հայութիւնը բնաջին ընելու գործը: Այս Եւրոպան, որ բնաւ չէ ներում գողի մը իր յանցաներուն, այստեղ ալ յարձակում մը կրելու երկուզ պաշարած է ամեն որ:

շուրջը, որը ոչ միայն հազարաւոր անմեղ հայերու արիւն խմած է ու կը խմէ, այլև չխնայեր իրեններէն ալ ամեն անոնց, որոնք իր արդէն խարխուլ գոյութեանը վնասող ձեռնարկներ կնեն: Հայը մահէն չի վախնաբ: Նա կը մեռնի լաւագոյն համարելով մահը ստրկութիւնից, նա կը մեռնի իւր հայրենիքի ազատութեան համար բայց նրա անմեղ արեան կարմիր բիծը չի չնչիր յաւետ նրանց ճակատէն, որք կարող էին նրան օգնել ու չօգնեցին: Հայը կը մեռնի մինչև իր յետին շունչը գոչելով՝ Ազատութիւն կամ մահ:

Յ. Գ. Մի քանի օրէ ի վեր անհամբերութեամբ ըսպաւած ուստական զրահաւորը այս գիշեր հասաւ, և խարսխեց առանց բարեկելու Օսմ. բերդը: Տակաւին չըգիտցէրի թէ որչափ պիտի մայ և ի՞նչ ուղղութեան պիտի հետեւի նա, սա միայն ճշմարիտ է, որ տիրող սարսափը մասամբ մեղմացաւ:

Ամասիայից նոր հասնող մի թուրք ջորեպան հաւասարում է, որ հոն մեռածների թիւը 150-ի մօտ է. շուկան, կաւելցնէ նա, աւերակ մ'է իւր ամբողջութեամբ. ոչ մարդ և ոչ գործ, մեռելութիւն տիրում է ամեն կողմ. նա լսել է նաև, որ Մարզւանում մեռածների թիւը վերև հաղորդածից շատ աւելի մեծ է:

Մ. Ը. 30 դր., Ա. Ա., 30 շ., Մ. և Բ. որդիք նոյնի 10 շ., Ա. Վ. 30 շ., Խ. Մ. 20 շ., Յ. Զ. 20 շ., Բ. Ա. 50 շ., Յ. Բ. 60 շ., Ո. Վ. 10 շ., Բ. Օ. 20 շ., Մ. Ամշակեանց 30 շ., Արդարից 10 շ., Մ. Ի. 5 շ.: Գումարն է ք. բնակիչներից հաւաքած դրամ 1165 դրան:

Սալմաստ. Ա. Հ. 100 դրան, Եղ. Ա.Բ. Ա. 350 շ., Բ. Բ. 100 դ., Կ. Մանւէլեան 150 դ.:

Արշակաւան քաղաքի Կեղեռնական սնդուկին մէջ ստացւած են.

Վարդանոյշ 40 դահեկան, Ուժանակ 90 դհ., Ոմ 15 դհ., Նիզակ և Կացին Խ. 80 դհ., Արտաւազեան Խ. 300 դհ., Մ. Միքայէլեան 10 դհ., Կ. 5 դհ., Գինարի Խ. 50 դհ., Ցուսացող հայուհի 54 դհ.:

Հայկաւանէն.—Խոլիկ և Ալք վասն Զէլթունի 2 ու կէս մէծ, Երկաթ քաղաքի Երկաթ Խ. Թոյնէն 1 օսմ ոսկի, Գոնեաք 1 օսմ. ոսկի, Զանազաններէ 4 օսմ. ոսկի Քուշանաց քաղաքէն.—Պարթէք 120 դհ., Անիս 125 դհ., Փ. Բ. Յ. 300 դհ., Զ. Խ. 1080 դհ., Թ. 20 դհ., Մ. Կ. Խ. տիկին 500 դհ., տղայոցմէ 41 դհ. Աւետ. Պեր 200 դհ., Ա. սիրտ 10 դհ., Գ. Կ. 20 դհ. Բ. քաղաքի հայ ուսանողներից 221 ֆր. 66 սանտ.

ՆԻՒՐԱՏԻՌԻԹԻՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեկամիլսական Դաշնակցութեան Կենտրոնական սնդուկի մէջ ստացւեցան.

Պ. Ի. Մ... քաղաքից Ժիրայրի ձեռքով պանդուխտներից 1 Մ. Ա. 30 դրան, Յ. Տ. Վ. 10 դր., Յ. Կ. Կ. 50 դր., Մի ոք 20 դր., Ոմ 30 դր., Անատոլ 20 դր., Ղարադարցի ոմ 40 դր., Ոմ 30 դր., Բ. Ա. 20 դր., Ղ. Ա. 30 դր., Ա. Վ. 50 դր., Մ. 50 դր., Ա. Յ. 10 դր., Ոմ 10 դր., Յ. Հ. Յ. 10 դր., Յ. Գ. 10 դր., Օ. Դ. 20 դր., Մ. Տ. Ա. 10 դր., Օ. ոմ սալմասացի 10 դր., Ումից 20 դր., Անհատ 10 դր., Ոմ խոյեցի 10 դր., Գ. 20 դր., Մի ոմ 10 դր., Յ. Ա. 10 դր., Յ. Վ. 10 դր., Սկ լեռնցի 10 դր., Ա. Ա. 10 դր., Ոմ 10 դր., Բ. 10 դր., Մ. Բ. 10 դր., Հ. Տ. Գ. 10 դր., Մի 10 դր., Ա. Մ. Ա. 20 դր., Ա. Յ. 10 դր., Մուրացան Մ. Պ. 10 դր., Յ. Մ. 20 դր., Մ. Յ. 5 դր., Ղարադարցի 20 դր., Նեփեշտցի 10 դր., Ոմ Յ. 10 դր., Զ. Յ. Ալմաստցի 30 դր., Ա. Բ. 5 դր., Պ. Մ. Մ. 10 դր., Մ. Ա. 10 դր., Ա. Յ. 5 դր., Կրկին 12 նոմերի Մ. Ի. 10 դր.: Գումար 835 դր.:

Նոյն ք. ի բնակիչներից Ժիրայրի աշխատութեամբ. Ա. Գ. Եանի, Լ. Մ. Եանի, Ա. Վ. Եանի և Ա. Մ. Եանի ձեռքով առանձին, որ է 51 №-ից Ա. Վ. 40 դր., Ա. Մ. 50 դր., Լ. Մ. 60 դր., Ա. Կ. Համբարձում 20 դր., Ա. Գ. 50 դր., Ա. Մամիկոն 50 դր., Պ. Ե. 50 դր., Ա. Գ. 40 դր., Կ. Վ. 30 դր., Կ. Կ. Մովսէս Ա. 30 դր., Կ. Վ. 10 դր., Ս. Ա. 10 դր., Մ. Բ. 20 դր., Գ. Բ. 10 դր., Ե. Մ. 60 դր., Մ. Բ. 80 դր., Բ. Յ. 50 դր., Մ. Ա. 10 դր., Ա. Ա. 20 դր., Ս. Ա. Բ. 15 դր., Զ. Տ. Ֆ. 30 դր., Ե. ամբ 5 դր., Ա. Բ. 60 դր., Յ. Տ. Վ. 10 դր.,

Նորից ինդրում ենք հասցէները գրել և իստ որ ոշ ու պարզ: Այլապէս մենք ստիպւած ենք անբաւարար ու անպատասխան թողնել շատերին, որովհետեւ հասցէները անընթեռնելի են:

* *

Խնդրում ենք ծրարի վրայ, գրել մեր հասցէն երից մէկ և ու մէկը, որովհետեւ պայն նամակները որոնց վրայ գրւած են միանգամբ երկու հասցէներն էլ՝ մեր ձեռքը չեն հասնում, ինչպէս պատահել է նոյն իսկ մի քանի ապահովացրած նամակների հետ:

* *

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցէն դարձնել „ԱՐՄԵՆ-ԳԱՍՊԱՐ“ որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն:

Խմբագրութեան հետ թղթակցողներից ինդրում է բացառապես դիմել այդ նոր հասցէով:

Դաշնակցութեան անծանօթներից լսդրում է թղթակցութեան և նիբատութեան համար դիմել:

Arméne-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole; 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան,